ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԼՂԻՄ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆՈՐՄԱԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը նշում է, որ Լեռնային Ղարաբաղի վերջին իրադարձությունների կապակցությամբ հանրապետությունում սրված իրադրությունը շարունակում է մընալ ծայրաստիճան ջարված: Երևանում տեղի են ունենում չարտոնված միտինգներ, ցույցեր, երթեր: Մի շարք ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում շարունակվում են աշխատանքի դուրս չգալը, պարապմունքների բոյկոտումը:

Վերջին օրերին հանրապետությունում ստեղծված իրավիճակը հղի է անկանխատեսելի հետևանքներով, որոնք կարող են մեր ժողովրդին հետ շպրտել ձեռք բերվածից, փակուղի մտցնել, անելանելի կացության մեջ դնել:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը խորապես մտահոգված է Լեռնային Ղարաբաղում ստեղծված դրությամբ և վճռաբար դատապարտում է հրահրված անկարգությունները, որոնք ծանր հետևանքների են հանգեցրել:

Այդ կապակցությամբ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը դիմել էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի մի խումբ դեպուտատներ՝ առաջարկելով Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջան գումարել: Գերագույն սովետի նախագահությունը նշում է, որ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի 1988 թվականի հունիսի 15-ի յոթերորդ նստաշրջանում հենց որոշում ընդունվեց Լեռնային Ղարաբաղը Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելուն համաձայնություն տալու մասին: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը 1988 թվականի հուլիսի 18-ի նիստում քննության առավ այդ հարցը և ընդունեց համապատասխան որոշում: Աշխատանք է ծավալված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի էկոնոմիկայի, մշակույթի հետագա զարգացման ապահովման, աշխատավորների բարեկեցության բարձրացման նպատակով ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած որոշումների կատարման ուղղությամբ, և այդ աշխատանքի մեջ ակտիվորեն ներգրավվում են հանրապետության աշխատավորական կոլեկտիվները:

Լեռնային Ղարաբաղին առընչվող հարցերի բազմակողմանի ուսումնասիրության համար հատկապես կազմված է ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի հանձնաժողով, որին հանձնարարված է ուսումնասիրել ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1988 թվականի հուլիսի 18-ի նիստում արված առաջարկությունները և դրանք պատրաստ լինելուն պես ներկայացնել նախագահության քննարկմանը:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1988 թվականի հուլիսի 18-ի որոշմանը համապատասխան, նպատակ ունենալով ապահովել Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ որոշումների գործնական իրականացումը, Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կուսակցական, սովետական ու տնտեսական մարմինների աշխատանքի կազմակերպումն ու կոորդինացումը, ԼՂԻՄ է ուղարկված ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ Ա. Ի. Վոլսկին, որն օժտված է արտակարգ լիազորություններով:

Դրա հետ մեկտեղ հանրապետության աշխատավորները մտահոգություն են արտահայտում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքի, այդ որոշումներով նախատեսված երաշխիքների ապահովման առթիվ: Բնակչությունը քիչ է իրազեկվում ընդունված որոշումների կատարման ուղղությամբ տարվող գործնական աշխատանքի մասին, ինչը բարեբեր հող է ստեղծում հնարավոր ամեն տեսակ ասեկոսեների տարածման և իրադրության սրման համար:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը **որոշում է.**

1. Խնդրել ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը՝ միջոցներ ձեռնարկել արագացնելու «Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ գերագույն սովետների որոշումների մասին» նախագահության 1988 թվականի հուլիսի 18-ի որոշման կատարումը և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նիստում արված առաջարկությունների քննարկումը:

2. Խնդրել ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի հանձնաժողովին՝ արագացնել ԼՂԻՄ-ին առնչվող հարցերի նախապատրաստումը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունում քննության առնելու համար:

3. Խնդրել ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը՝ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել ապահովելու Ադրբեջանական ՍՍՀ տերիտորիայում հայ բնակչության անվտանգության ռեալ երաշխիքներ, նկատի առնելով, որ Հայկակաան ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը իր վրա է վերցնում հանրապետությունում ադրբեջանցի բնակչության անվտանգության ապահովման նույնպիսի երաշխիքներ:

4. Նպատակահարմար գտնել Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջիկա նստաշրջանում քննության առնել հանրապետության կուսակցական, սովետական ու տնտեսական մարմինների կողմից ԼՂԻՄ-ի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքը:

5. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին, հանրապետության ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործադիր կոմիտեներին՝ ներգործուն միջոցներ ձեռնարկել վերականգնելու աշխատանքի նորմալ ռիթմը արդյունաբերական ձեռնարկություններում, հիմնարկություններում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում, աշխատավորական կոլեկտիվներին և հասարակական կազմակերպություններին լայնորեն ներգրավել պայքարելու պետական և աշխատանքային կարգապահության խախտումների դեմ:

6. Ժողովրդական դեպուտատների տեղական սովետների գործադիր կոմիտեներին և հանրապետության իրավապահ մարմիններին՝ վճռական միջոցներ ձեռնարկել ապահովելու սոցիալիստական օրինականության խստիվ կիրառումը, հասարակական կարգի պահպանումը:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության

նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության

քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ,

23 սեպտեմբերի 1988 թ., քաղ. Երևան